ԳՈՐԾՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՔՈՒՎԵՅԹԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 2016-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը, ի դեմս Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և Քուվեյթի Պետության կառավարությունը, ի դեմս Քուվեյթի Պետության բարձրագույն կրթության նախարարության, այսուհետ՝ «Կողմեր»,

Հիմնվելով 2009թ. նոյեմբերի 3-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Քուվեյթի Պետության կառավարության միջև կրթության և գիտության ոլորտում համագործակցության մասին» համաձայնագրի դրույթներին,

ձգտելով զարգացնել և խորացնել համագործակցությունը կրթության և գիտության բնագավառներում

պայմանավորվեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Կողմերը կհամագործակցեն և փորձի փոխանակում կիրականացնեն բարձրագույն կրթության ոլորտում՝ իրենց պետությունների կրթական համակարգերի կառուցվածքի, բովանդակության և կազմակերպման,

ուսումնական ծրագրերի, դասագրքերի և այլ մասնագիտացված գրականության մասին տեղեկատվության փոխանակմամբ:

Հոդված 2

Կողմերը կաջակցեն երկու երկրների բարձրագույն ուսումնական և գիտահետազոտական հաստատությունների միջև ուղղակի կապերի հաստատմանը և զարգացմանը՝ այդ հաստատությունների միջև կնքված երկկողմ համաձայնագրերի հիման վրա:

Հոդված 3

Կողմերը կխրախուսեն երկու երկրների բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթաթոշակների փոխանակումը:

Համաձայն կիրառվող ուղեցույցի՝ կողմերը փոխադարձության սկզբունքով տարեկան կփոխանակեն մագիստրոսական կրթաթոշակներ՝ ապահովելով ընդունելության համար նախատեսված հիմնական և ընդհանուր միջին որակական գնահատականները, լեզվի իմացության պահանջները, ուսումնառության տարբեր կրթական ծրագրերի համար նախատեսված ցանկացած այլ պայմանները:

Քուվեյթյան կողմը հայկական կողմին կտրամադրի Քուվեյթի համալսարանի լեզուների կենտրոնում արաբերեն լեզվի ուսուցման կրթաթոշակներ:

Հոդված 4

Քուվեյթյան կողմը կաջակցի արաբագիտության կենտրոնին անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով, ուսումնամեթոդական նյութերով, ձեռնարկներով և գրականությամբ:

Հոդված 5

Կողմերն իրենց համալսարաններում կաջակցեն հայերեն և արաբերեն լեզուների ու գրականության առարկաների դասավանդմանը:

Հոդված 6

Կողմերը կկազմակերպեն փորձագետների խմբերի, պրոֆեսորների և դասախոսների ամենամյա փոխանակում՝ փոխադարձ կապերի ամրապնդման, փորձի փոխանակման, ինչպես նաև համագործակցության զարգացմանն առնչվող հարցերի քննարկման նպատակով:

Հոդված 7

Ընդունող Կողմը ուղարկող Կողմի քաղաքացիներին կացության կարգավիճակ ստանալու կամ կացության ժամկետը երկարաձգելու դեպքում կազատի նրանց կացության կարգավիճակ ստանալու համար նախատեսված հարկերի վճարումից, եթե այն կապված է սույն Ծրագրի իրականացման հետ:

Հոդված 8

Սույն Ծրագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և գործում է հինգ տարի ժամկետով:

Սույն Ծրագիրը ինքնաբերաբար երկարաձգվում է ևս հինգ տարով, եթե Կողմերից որևէ մեկը համապատասխան ժամանակաշրջանի ավարտից վեց ամիս առաջ գրավոր, դիվանագիտական խողովակներով չի ծանուցում մյուս Կողմին սույն Ծրագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Ստորագրված է Քուվեյթ քաղաքում 2015թ. դեկտեմբերի 17-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, արաբերեն և անգլերեն լեզուներով: Բոլոր տեքստերը հավասարազոր են: Սույն Ծրագրի մեկնաբանման ժամանակ տարաձայնություններ առաջանալու դեպքում գերակայությունը կտրվի անգլերեն լեզվով տեքստին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝

ԱՐՄԵՆ ԵՐԻՑՅԱՆ
Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարար

ՔՈՒՎԵՅԹԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝

ԱՆԱՍ ԽԱԼԵԴ ԱԼ ՍԱԼԵՀ
Փոխվարչապետ, ֆինանսների նախարար, նավթի նախարարի պաշտոնակատար

Executive Program between the Government of the Republic of Armenia and the Government of The State of Kuwait in the Field of Higher Education and Scientific Research for the years 2016-2020

The Government of The Republic of Armenia represented by the Ministry of Education and Science and The Government of The State of Kuwait represented by the Ministry of Higher Education, hereinafter referred to as the "sides"

Referring to the agreement signed on November 3, 2009 on "Educational and Scientific Cooperation between the Government of the Republic of Armenia and the Government of the State of Kuwait "

Willing to develop and deepen cooperation in the fields of Education and Science

Have agreed upon the following:

Article (1)

The sides shall cooperate and exchange the experience in the field of higher education through the exchange of information on the structure, content and organization of their State's educational systems, national curricula, textbooks and other specialized literature.

Article (2)

The sides shall support the establishment and development of direct links between the universities and scientific research organizations of the both states in accordance with bilateral agreements signed between these organizations.

Article (3)

The sides will encourage the exchange of scholarships in Higher Education institutions in both countries.

Both sides will annually exchange scholarships for Master's degree on a reciprocal basis, with fulfilling the terms of acceptance of the general GPA, major GPA, language requirements, and any other conditions set by the different programs of study in accordance with the applicable guidelines.

The Kuwaiti side will offer the Armenian side scholarships for the Arabic language in the Center of Languages of Kuwait University.

Article (4)

The Kuwaiti side will support the Center for Arabic Studies with necessary educational, technical and training materials, manuals and literature.

Article (5)

The sides shall support the teaching of subjects related to Armenian and Arabic languages and literature in their universities.

Article (6)

Both sides shall organize annual exchange of expert groups, lecturers and professors, with the aim of strengthening the mutual relations, sharing the experience as well as developing cooperation.

Article (7)

The receiving side shall exempt the citizens of the sending side from paying taxes for receiving a residency status or extend their residency status in the case the latter is connected with the implementation of this program.

Article (8)

The present program will enter into force on the date of its signature and will remain valid for a period of five years.

The validity period this program may be automatically extended for a further of 5 year period, unless any of the sides notifies the other side in

writing and through diplomatic channels, of its intention to terminate this program at least six months before the termination thereof.

Done in Kuwait City on the 17th of December 2015, corresponding to the 6 of Rabia Alawwal 1437H, in two original in Armenian, Arabic and English, all texts being equally authentic. In case of divergence in the interpretation of the provisions of this program, the English text shall prevail.

For
the Government of the
Republic of Armenia

ARMEN YERITSYAN
Minister of Territorial
Administration and Emergency
Situations

For
the Government of the
State of Kuwait

ANAS KHALED AL-SALEH
Deputy Prime Minister and
Minister of Finance
and Acting Minister of Oil